ՍԻՐՎԱՐԴ ԱՍՐՅԱՆ

ՍԻԱՄԱՆԹՈ. «ՀԱՅՐԵՆԻ ՀՐԱՎԵՐ ԿԱՄ «12 ԿՈՉ ՏԱՐԱԳԻՐ ՀԱՅՈՒԹՅԱՆ»

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v1i68.149

ԱՄՓՈՓՈՒՄ

«Հայրենի հրավեր կամ «12 կոչ տարագիր հայության» ». ծնվեց 1909-1910 թվականներին: Այստեղ արդեն նախկին ըմբոստ ոգին չէ իշխողը, չկա պայքարի կոչ ու ծանր մղձավանջ: Բանաստեղծը ժամանակի կանչով կարոտի երգ է ձոնում նրանց, ովքեր դեգերում են օտարության մեջ: Դա հայրենիքի կանչն է՝ ուղղված հայությանը, դա «հայ դաշտերի պաղատանքն է»՝ ուղղված հեռավոր հորը, եղբորը կամ որդուն, դա հարսի արցունքոտ ու անկատար երազն է՝ պարուրված գալիք օրվա տագնապով:

Վերադարձեք մեր ծոցը, ով մշակներ,

Առավոտներն արդեն ապրիլ կբուրեն... (Երկեր, 1979):

Սիամանթոն նախազգացել էր իր ժողովրդի առաջ պահված ողբերգությունը և 1909 թվականին, երբ վերադարձել էր Պոլիս, գրեց «Կարմիր լուրեր բարեկամես», ինչը Դանիել Վարուժանն անվանեց «տաղանդավոր ոճերգություն»:

Հերոսական ու պայքարի կոչող բանաստեղծություններից հետո Սիամանթոն գրեց լավատեսական շարք՝ «Հայրենի հրավեր կամ «12 կոչ տարագիր հայության» »: Երբ համեմատաբար խաղաղ տարիներ էին, նա փորձեց պանդուխտ հայերին բանաստեղծական հորդորով տուն բերել, միավորել հարազատ հողի վրա: Նրա սիրտը շարունակեց մխալ ողբերգական պատկերներից, բայց աշխարհով մեկ ցրված հայությանը ստեղծագործ աշխատանքի շուրջ համախմբման կոչ արեց, քանզի արտագաղթը սպառնում էր հայրենիքը վերածել սոսկ աշխարհագրական տարածության:

Բանալի բառեր և արտահայտություններ. *պանդխտություն, հող, հայրենիք, տարագիր հայություն, վիշտ, ցավ, կարոտախտ, համախմբման կոչ, հայրենի կանչ, վերադարձ:*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սիամանթոյի վերքերը շարունակում էին մխալ: Արևմտահայությանը բաժին ընկավ դաժան բախտ՝ «Հանցանքը հայուն ճակատագիրն էր…»: Ո՞ւր փախչել որքան արյունոտ, նույնքան էլ հարազատ ճակատագրից, և ինչո՞ւ…

Կիլիկիայից եկած կարմիր լուրերից շառագունեց հորիզոնը: Թուրքական յաթաղանը խոր անդունդ բացեց հայի հոգում, որից ելնելը մեծ ճիգեր էր պահանջում: Անհրաժեշտ էր վերածնել հոշոտված հոգիները ու հեռուներից տուն բերել տարագիր հայությանը: Իսկ անդունդը գնալով խորանում էր, երբ Վարուժանը տագնապով դաջեց. «Հայրենիքը զմեզ մեր անձեն հեռացուցած է»:

Հայրենիքը պիտի հավաքեր աշխարհով մեկ շպրտված հայության բեկորները ու բարձրանար մոխիրներու միջից:

Ցավը ճնշում է ու լուծվում ժամանակի և տարածության մեջ, մնում է ցավի վերհուշը, որն ավելի սուր է ճնշում: Սեփական ցավի տխուր հիշողությամբ Սիամանթոն մեկնեց Ամերիկա՝ Բոստոն, որտեղ տեսավ գաղութահայ կյանքն իր մանրումեծ մանրամասներով: Մինչդեռ հայրենիքում ազգային կյանքի համար փոքրիշատե խաղաղ վիճակ էր ստեղծվել. վերածնության ուղի էր բացված: Պոլիսը կանչում էր, և այդ կանչը ցավալի աղերս էր ու հոգևոր փրկության աղոթք: Աշխույժով լցվեցին լրագրերը, թերթերը, կյանքը, հնչեցին հայրենաբաղձ երգերը՝ հավատով ու հույսով առլեցուն: Հայրենիքը հարազատ զավակների գրկում պիտի լսեր կեղեքված սրտի բաբախյունը:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Սիամանթոյի «Հայրենի հրավեր» շարքը թեմատիկ տեսանկյունից լայն ու խոր ընդգրկվածություն ունի: Այն աշխարհասփյուռ հայությանը բնորոշող թեմա է, որ արծարծվել է տարբեր ժամանակներում: Թեման ունի պատմական, բանասիրական, գրամշակութային արժեք: Թեման արդիական է նաև մեր օրերի

համար: Հետազոտությունն իրականացվել է պատմաբանասիրական, գրականագիտական վերլուծական մեթոդով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

«Եկուր, որդյակ, հայրենի տունդ շենցուր...»:

Դանիել Վարուժան

Անցյալը հազար թելերով ագուցված էր ներկայի հետ, այն ներկայի մեջ էր, ու, բնականաբար, ներկան դեռ երկար պիտի շնչեր անցյալի հիշողություններով: Իսկ ժողովրդի ճակատագրում բեկում էր պետք, որ գարունն էլ ձյուն չբերեր ու կարմիր լուրեր...

Սահմանադրությունը պոլսահայ գրականությանը բերեց ժամանակավոր խաղաղություն: Ինչպես հետագայում գրում է Ա. Շիրվանզադեն, Սիամանթոն երբեմն տառապում էր արտասվելու չափ, երբ խնդիրը վերաբերում էր եվրոպական տերությունների մոտեցմանը. «**Ամեն ինչ կորցրինք, խնայենք գոնե մեր ազգային պատվախնդրությունը ու թքենք այդ պառլամենտներուն ու մինիստրներուն վրա» (Շիրվանզադե, 1961)**:

Սիամանթոն բերում է ազատ ստեղծագործության գաղափարը, դեն նետում ժամանակի քողը, որ հյուսված չէր ճշմարտության թելերից: Երեկվա ռազմի շեփորը հանդարտվել է, բայց չի լռել ցավը. այն փոխվել է դառնության, իսկ երգը գույնաձև է ստացել. «առանց արյան են ծլեր այգիները, որքան էլ զարմանալի թվա: Հենց այդպիսի մի պահի հնչեցին «Հայրենի հրավերի» տասներկու նվագները, որպեսզի լցվեն հայի հոգու ծալքերը ու հեռուներից տուն բերեն նրան:

«Հայրենի հրավերի» հերոսը նույն դյուցազունն է՝ իր արծվենի նկարագրով, քաջազուն հայորդին է՝ ուժեղ, առաքինի, բայց որքան պիտի մաքառեն ոչ արյան, այլ հողի դեմ ու հողի համար, սրի տեղ գրիչ ճոճեն: Որոնք տեղահան են եղել այնպես, ինչպես «թունավորված լճից կարապներն են հուսահատորեն գաղթում հեռուներ»:

Պանդխտության տաղը, որ գալիս է հեռավոր ակունքներից, բյուրեղանում է Քուչակի ու այլոց շուրթերին, այժմ նոր հմայք է ստանում անեղծ ձևի ու պատումի միասնության մեջ:

«Հայրենի հրավերը» բացվում է հոգեվարքի տեսարանով, ու մի պահ թվում է, թե բանաստեղծի հոգում դեռ բոցկլտում են հոգեվարքի կրակները: Բայց ո՛չ. սա արդեն հավատի մեղեդին է հնչում հոգեվարքի պահին, սա կարոտախտ է, որի մասին այնքան ցավով են խոսում այս սերնդի բանաստեղծները:

Վերջին նամակը հոգեվարքի մեջ տանջվող հոր աչքերի սպեղանին է, իսկ արշալույսը բարի է ու մաքրամաքուր, երբ սոխակները առատ լալիս են սիրահարի պես: Ի՞նչ է նրա ուզածը. որդու ձեռքով տնկված «վարդատունկեն քանի մը վարդ», որոնցից սրբազան բույր ու արքենի հոտ է գալիս:

Սա կարոտի երգն է, որ արցունք է քամում աչքերից.

Քու ծարավեդ ծերացեր եմ, ես քու հայրդ եմ՝ մահաջերմ ու դողդոջուն... (Երկեր, 1979):

Իսկ այդ մահաջերմից դողում էր մի ողջ սերունդ, որն «սպասման հիվանդ էր»... Ու թեև կռունկներն անցել են հովերի հետ, ջորիների բոժոժը ավետիս է բերել, և մայրամուտի կարմրադեղին ամպերի միջից արեգակը արյան նման ոռոգում է դաշտերը:

Հավատն աներեր է, միայն թե պետք է վանել գիշերը և վառ պահել ճրագները.

Եթե դիակս ալ ըլլա, պետք է որդիս, այս իրիկուն,

աչքերս բաց դիմավորեմ... (Երկեր, 1979):

Որքա՜ն սեր կա պահված այս տողերի տակ, որքան թախիծ ու դառնություն: Այդ սիրո կատարյալ խտացումն է «Հարսին երազը» բանաստեղծությունը: Սիամանթոն նրբորեն բացում է տարիներով միամորիկ հարսի հոգու ծալքերը, որտեղ պահված է հրաշունչ համբույրից շիկնած արփին՝ իր երազային ջերմությամբ ու խոստումների չափ բարի: Քաղցր վերհուշն օրորվում է հարսի

երազների մեջ, իսկ արցունքները սահում են դեմքի վրայով՝ համբույրի տեղ ու աստղերի նման.

Վերադարձի՛ր մեր տնակի սեմին վրա, ես քու ճամփուդ կսպասեմ,

Ձեռքս պարապ քու ձեռքերեդ, սևերովս քեզ կերազեմ...

Վերադարձի՛ր մեր պարտեզին պտուղներուն պես անուշ,

Սրտիս սերը քեզի համարիր համբույրը կպահե (Երկեր, 1979):

Սա հայ հարսի երազն է, որ մոտ է իրականությանը, ճշմարտանման, բայց աստղերի պես հեռու: Սա հայ մայրերի չիրականացած մաքուր օրորն է, երկնային ու գոյության պահպանման գաղտնիքը.

Վերադարձի՛ր, ալ կարոտս կատար չունի (Երկեր, 1979):

Իր երազների նման լքված ու մենավոր հարսը արբեցած է միայն վերհուշի դառը գինով:

Ծովերն օր մը ծայրե ի ծայր թո՛ղ ցամաքին,

Ու ակնթարթ մը երկու աշխարհը թող իրարու մոտենան...

Այնուհետև արքայության ու արևի ալ պետք չունիմ (Երկեր, 1979):

Գույները մեկը մեկից վառ են, պարզ ու հանճարեղ: Հայրը տառապում է հոգեվարքի գիշերում, բայց հավատում է ճրագների լույսին, մայրություն չտեսած հարսը հառաչում է կորցրած հիշատակի համար, բայց սև հանդերձների մեջ անգամ հավատում է երազի գուներանգին:

Այս հավատը բխում է դեպի հայրենի հողն ունեցած անսահման սիրուց ու կարոտից: Այդ հողը հարազատների սիրո միակ երաշխիքն է, որ պարզ երևում է «Եղբայրն իր եղբորը» բանաստեղծության մեջ:

Եղբայրն անասելի սարսափով գրում է եղբորը, թե ինչպես է տեսել մոր հոգեվարքի վերջին սարսուռը: Դա գալարում էր «կյանքեն ի մահ», դարերի փորձով հավաստում է բանաստեղծը: Դա մի ողջ սերնդի գալարումն է դեպի «ունայնը մթին»:

Մայրն անսասան է պահել իր հավատն ու հույսը, այդ հավատով էլ նայել մահվան սև աչքերին: Մահվան բույրով է լցվել տունը, տունը «տիեզերք մէ

մեռելական», որ պահում է իր մեջ որդու կենդանի հոգին իբրև դիակ: Հիրավի, զարհուրելի է այդ մահը, որին պետք է հաղթել սեփական հավատով, ոգու մեծությամբ ու հոգևոր հատկանիշներով, որ ինչքան էլ սոսկումի գիշերներ գան, հիշատակը կմնա մաքուր ու անբիծ, ինչպես ուռենու ճյուղը, որ պիտի տարվի հողակույտին: Վերջին պատկերը առավել ջերմ է ու ցնցող.

Եվ ես թշվառս՝ գերեզմաննոցեն վաղն առավոտ պիտի դառնա

Հին օրերու մեր այս թափուր տնակին...

Երկու դռներն իբր դագաղ,

Ես իմ վրաս, ես իմ վրաս խենթի մը պես փակելու... (Երկեր, 1979):

Ու թևում են երազները բանաստեղծի հայրենիքի թափուր ու այրված հողակույտերի վրայով, որպեսզի վերադարձի կանչով հետ բերեն մոխրացող հավատը: Հողի ձայնը կարոտի գույն ունի: Այդ գույնը տեսանելի է հոր հոգեվարքի մեջ, հարսի և մոր երազում, եղբոր սրտաճմլիկ նամակում-ուղերձում: Դա հողի մարդու ֆիզիկական և հոգևոր գոյության համոզմունքն է ու հավերժության գաղտնիքը: Երազներ՝ նման ծաղիկների, որ հոշոտեցին դեռ չբացված: Իսկ այդ երազների առաջին կրողը մայրն է՝ ամենասուրբ էակը հողի վրա: Հնարավոր չէ չափել նրա տառապանքի խորությունը, քանզի դարերից են գալիս նրա արմատները: Առատ հույզն ու թախիծն է գերիշխում «Մոր մը երազը» բանաստեղծության մեջ: Մայրը երազ է տեսել, երազում՝ մեռած չորս որդիներին.

-Մայրիկ, մայրիկ... հին օրերու արշալույս...

Այսօր նորեն չորսերնիս մեկ, մեր հողերեն դուրս ելած՝

Մրրիկին հետ, քեզի եկանք, տանդ դռնակը բախելու... (Երկեր, 1979)

Մայրը հին օրերի սրբությունն է ու քաղցրությունը, երջանկությունն ու հերոսական արիությունը: Հետաքրքիր է բանաստեղծական հարցադրումը.

Յոթը տարի, յոթն անգամ տանդ դռնակը ծեծեցինք,

Բայց այս գիշեր միայն բաց էր...ո՛ր ճամփորդին կսպասես... (Երկեր, 1979)

Անհնար է սեղմել ցավի կոկորդը, երբ մեռածները ճչում են.

Մայրիկ, մայրիկ... հին օրերու գուրգուրանք, հին օրերու գթություն,

Ինչպես կապրիս, ինչպես կապրիս տնակիդ մեջը թափուր (Երկեր, 1979):

Բայց մահ չէ սահմանված նրա համար, ով հին օրերի գուրգուրանքն է ու գթությունը. օտար աստղի տակ մեկը երազում է հայրենի օջախի ծուխը: Նրա համար պետք է ապրել ու մաքառել սեփական գոյությամբ: Պիտի ապրի մայրը վշտից քարացած աչքերով՝ թշվառության մեջ անգամ փայփայելով նոր օրերի հույսը: Հետո հին թախիծների միջով գա կաղանդի իրիկունը՝ անբուժելի կարոտների վերհուշի հանգույն: Անվերջանալի սիրով է ափեափ լցված «Կաղանդի իրիկունը» բանաստեղծությունը:

Ձյունն երկինքեն շուշանի պես անդորրությամբ կթորա,

Մարդերը դեռ երջանիկ են... (Երկեր, 1979)

Երջանիկ է մարդը ամանորյա գիշերվա մեջ: Մեծ գաղափարներ կրող բանաստեղծը հավատում է երազների ծաղկեպսակ ճամփաներից եկող հավերժահարսի հեքիաթին, մինչդեռ քառասուն անձ թոնիրի շուրջը բոլորած՝ դրախտ են որոնում միմյանց նայվածքների մեջ:

Բնական ու հյութեղ է մեծ մոր խոսքը՝ նման լուսե օրհնության.

Վաղն առավոտ՝ մթնշաղին՝ այգու երգն երգելով՝

Ջրի գացեք: Նոր տարիին, աղբյուրներեն, ակնթարթ մը՝ ոսկի է, որ կվազե... (Երկեր, 1979)

Ասելիքը գտնված է ձևի մեջ: Հատվածը փայլում է վաղվա օրվան և ոսկի պահին ընծայած հավատով: Արևը տառապած հողի ապագան է, ջուրը՝ նրա ոսկեդարյա պատմությունը: Իսկ վերհուշը դառնությամբ նայում է մոխրացող չարիքների միջից.

Ձյունն երկինքեն և աստղերեն և Աստվածեն,

Գերեզմանեն քարերու պես եղերական, վար կթափի...

Եվ լուսնկին մահիկը մահվան մանգաղի նման՝

Ինքն իր դեմքն արյուններուն մեջ տեսնելեն զարհուրած,

Կարծես թե իր մեղքին համար ամպերուն մեջ կդողդողա... (Երկեր, 1979)

Ճրագը մանկան պես մեռնում է թոնիրի վրա, հարսի հույսը մահանում է, ու դուռը ծեծում են հիշատակները. «Երգող չի կա: Ժպիտ չի կա: Համբույր չի կա: Օրհնությունները մարած են», մինչ՝

Պատմության աղբյուրներն ավերակեն տակ կկոծեն...

Եվ ավանդության ոսկիին տեղ՝ մարդերուն դեմ՝ միայն անեծք կհոսի (Երկեր, 1979):

Սիամանթոն խոսում է ավերված երազների մասին ու հավատում՝ սերն է, որ պիտի ջնջի հայության դառը ճակատագրի վրա կախված անեծքը ու խաղաղություն բերի նրա սահմաններին: Չապրված հույզով են թաթախված «Սեր» բանաստեղծության տողերը.

Գիշերն ունիմ մորմոքումիս միայն վկա,

Երբ աստղերուն անդորրությանը տակ նստած՝

Կսկսիմ ես փնտրել նայվածքներով խելացնոր,

Անթիվներու թվին մեջեն անոր աստղն ինձ անծանոթ... (Երկեր, 1979)

Մեղավորը բնությունն է՝ «գարունների դեմ բռնավոր», որ առանց վարանելու իր անօրեն օրենքին կրակներով այրում է հայ աղջկա առաքինի իրանի շուշանները: Ափսոսանքի ցավով է այրվում աղջկա սերը, որ մտացածին է ու անմարմին.

Մինչև այսօր և ոչ մեկ ինձ ձեռք չընծայեց,

Սիրո վարդն այն վարդերեն նվիրական... (Երկեր, 1979)

Ու եթե հարսը տառապում է ապրած ու կորցրած սիրո համար, թախիծը ծալ-ծալ դիզվում է նրա հոգում, ճակատագիրը դառն է ու խռոված. ո՞վ է մեղավոր, որ աղջկա քնքուշ հայացքը չի փայլել սիրո անուշ նայվածքից. . . Մնում է արցունքներ թափել ափերի մեջ, արցունքներ, որ նման են սիրո կայծերի: Խորն է գաղափարը ու ցնցող: «Մայրը իր զավակին» բանաստեղծության մեջ ուժեղ է ապրելու տենչը և կյանքի կարոտը: Մոր կերպարը ծավալվում է ամեն բանաստեղծության մեջ, որն իր կյանքը բերրի պարտեզ արած՝ աճեցրել է որդուն, իր էությունից է քայլ առել նրա տարագիր գոյությունը:

Մայրը որդու առաջ բացում է ընտանիքի ողբերգությունը.

Հիշատակես ես կսոսկամ...երբ դռանը կնայիմ,

Զորս սևադեմ մեռելկիր ճաղ մը իրենց ուսերուն,

Հորդ մարմինը մինչև այսօր, դեռ, կարծես,

Շտապաքայլ իր տնակեն դուրս կհանեն... (Երկեր, 1979)

Բայց նրան ուժ է տալիս նախնիների զորավոր արյունը, կամքը և մտածումը հաղթահարում են վիշտը. «Բայց ես կամքիս կրակներովը Աստծուս դեմ պիտի կռվիմ...»: Զորավոր են այդ կրակները, որ վառ են պահում հայրենի կարոտն ու արևի ծարավը, հազար թելերով մարդը կապված է իր հողին ու մաքառում է այդ հողի համար: Կյանքը լիուլի վայելելու համար ինչպիսի՜ ծարավով են դուրս հորդել հետևյալ տողերը.

Կյանքին փարած, հույսին փարած, և արևիս և արևիդ՝

Մահվան դեմ, մոր մը ուժովը պիտի կռվիմ...

...Մինչև որ դուն առավոտ մը նույն սեմերեն ներս չի մտնես... (Երկեր, 1979)

Մայրական սիրո մասին քնքուշ տողեր շատ են հյուսվել, բայց ուրիշ է որդիական սիրո զգացումը, որ դեռևս չուսումնասիրված շերտեր է պահում իր մեջ: Հուզիչ ու պատկերավոր է «Որդին իր հորը» բանաստեղծությունը. սքանչելի՝ ներքին խոհով ու ժողովրդի միասնության գաղափարով: Տարագրությունն օտարացրել է որդուն հոր հետ, որդի, որի երակներում հոր արյունն է հոսում, որի աչքերում խամրել է հոր հարազատ հայացքը: Սպասման անհագ ծարավով նա դիմում է հորը.

...Ես այն ճյուղն եմ զորավոր, դալարագեղ այն ծառին,

Որ հոգնությանդ օրերուն քու նեցուկդ պիտի ըլլա... (Երկեր, 1979)

Իսկ վերադարձն անխուսափելի է ու հավատը՝ ճշմարիտ. նա պիտի իր գրկի մեջ տեսնի հորն ու արտասվի տարիներով երազած երջանիկ հանդիպումի բերկրանքից:

Սիամանթոն հայրենիքից դուրս ճանաչեց «հայուն ամենեն խորունկ վիշտը՝ կարոտախտը», որը նոր ուժով բորբոքեց նրա մեջ հայրենի եզերքի կարոտը: Այդ կարոտը ժամանակի բանաստեղծների շուրթերից տարբեր ելևէջներով է հնչել: «Երանի նրան, ով հայրենական տուն ունի հիմա». թախծում էր Վահան Տերյանը: Դա նույն կարոտն էր հայրենի հող ու ջրի, որ երգում էր Վարուժանը. «Եկուր, որդյակ, հայրենի տունդ շենցուր...»: Դա մի կարոտ էր ցորենի կերպարանքով ու նոր ծաղկած խնձորենու բույրով՝ տարիներով կուտակված ու դուրս ժայթքած Սիամանթոյի արյունածեծ շուրթերից: Դա մի ողջ ժողովրդի դավանանքն էր՝ կմեռնենք, չենք տա հայրենին:

Հայրենի բնաշխարհի մարդու կերպարն առավել վառ գծերով է երևում «Այգեկութք» բանաստեղծության մեջ: Մարդը, հողի հետ ձուլված, ապագային է տանում կյանքի խորհուրդը, որ այլևս չկրկնվի արյունոտ սպանդը: Այդ առումով Սիամանթոյին հոգեհարազատ է Վարուժանը, որ երգեց ցորենի մեղմ ծփանքն ու կրակոտ հունձքը: Այգեկութը հողի մարդու ցավերի վերջն է, «դարդերի դարմանը»: Աշունն իր հետ բերել է անսահմանություն, արևներ ու օրհնություն: Այգիների մեջ ողկույզներն անգամ սպասումով են լցված, կռունկի կանչով ժպտում է արտը, հնձանները ծփում են ցորյանների երգով, սերունդների երթ է հայ հարսների պարը, որ տարածվել է «կալերուն դեմ»: Այգեկութ է, բնության ու մարդու հարության տոնը, լույսի զարթոնքն ու փառաբանումն աշխատանքի:

«Գերեզմաններեն ապաշավ», «Առաքյալը», «Հայ դաշտերուն պաղատանքը» գալիս են ամբողջացնելու «Հայրենի հրավեր» շարքը՝ խորացնելով բովանդակությունն ու արժևորելով թեմատիկան:

Հայրենիքն ուզում է խաղաղ հարկի տակ միավորել տարագիր որդիներին և ուժ տալ ստեղծագործ աշխատանքին: Բանաստեղծը մտորել ու խորհել է տալիս. այդ տարագրությունն արդյոք հայրենալքությո՞ւն չէ, և մի՞թե հեռանալու մեջ է փրկության ուժը: Դա հնչում է երեք հարյուր հազար նահատակների շուրթերից որպես դառը մեղադրանք ու ժողովրդական ցասում:

Ո՞ւր են անոնք, որոնք փախան, իբր տարագիր կամ ստրուկ...

Ազատության ձայները մեր ոսկերքը խենթեցուցին... (Երկեր, 1979)

Իսկ հարցը շարունակում է մտատանջության մեջ գցել.

Մե՞նք ենք մեռյալ, թե անոնք...

Եվ հնչում է պատասխանը.

Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք... (Երկեր, 1979)

«Մեռելներն անոնք են, որոնց համար մենք մեռանք» տողը բացում է «Հայրենի հրավերի» գաղափարական բովանդակության ծալքերն ու ստիպում նորից ու նորից խորհել այն մարդկանց մասին, որոնք նահատակվածների «ոսկորներեն կերտված ազատության տաճարներու խորանին ծնրադրելու չեկան»...

Ու որքան էլ մահվան գունատ ստվերները մռայլ գույներ բերեն բանաստեղծական շարքին, այն էլի շնչում է խոր հավատով ու համոզմամբ, որ արդարությունը շուշանի նման պիտի ծաղկի, լուսավոր ապագան ու նոր կյանքը պիտի ժպտան մտածումի ու հեծության ջահերի միջից:

Երի՜ցս փառք հայ մայրերին, որոնք իրենց ոսկեղեն կողերով ծնունդ տվեցին առաքյալներին ու ասպետներին, որոնք կոչված են վառ պահել արվեստների ու գիտության ջահը.

Կռիվեն վերջ՝ որոնումի և մտածման դաշտերը ձեզ կսպասեն...

Բոլորդ մեկ ձեր ճակատներովը ծանրախոհ,

Հեռուներեն՝ Հայրենիքին վերկենցաղմանը հառաջացեք՝

Դարերու սև խավարեն՝ լույսի ճամփան արորելու... (Երկեր, 1979)

Լույսի ճանապարհն է դարերի սև խավարից եկող ժողովրդի ճշմարիտ ուղին, և պիտի գնալ «ուղիղ և անթեք», ինչպես ինքը՝ բանաստեղծը, որ ինչպես Չարենցն է ասել՝ «լույս էր հայցում խավարից նայելով ուղիղ իր առջև»... Սա սերունդների երթն է, մաքառման ու մտածումների ուղին՝ տառապանքների միջով դեպի իմստության ոգին ու ստեղծագործ մտքի վերսլացումը, դեպի «թաքուն հույսի ու հուրերի շտեմարանը»:

«Հայ դաշտերուն պաղատանքը» եզրափակում է «Հայրենի հրավերի» ասելիքն ու գաղափարը: Ուրիշ է մոր, որդու, եղբոր՝ հարազատներին հեռվից տուն բերող կանչը, բայց երբ հայոց անմշակ դաշտերն են անձնավորված աղերսում հայրենիքի անունից, սա արդեն վսեմ է ու անդիմադրելի:

Ո՞ւր են օրերի օրհնյալ ձեռքերը՝ անպիղծ, բեղմնավոր ու վճռական: Ո՞ւր է գութանի վսեմ երգը ու ցորենը՝ հալած ոսկու հեղեղ, ո՞վ է հսկելու հասուն արտերը. չէ՞ որ գարուններն ու աշուններն անցնում են.

Ա՜հ, գթացեք, հայրենական և հավատարիմ ձեր հողերուն... (Երկեր, 1979)

Գթացեք վարդերի նման բացված սովահար որբերին, որ մի նոր անեծք չկախվի հայ դաշտերի վրա: Եթե մի տեղ հեռացածների խուճապը համարվում է «խեղճ», ապա այստեղ նրանք «անարժան ժառանգորդներ» են: Հողը չի սիրում իրեն լքողներին: Հայրենիքը, բնությունը միավորման ու հետդարձի կոչ են անում. գութանի երգն իբրև «ձայն հայրենական» արրդարության ու խղճի պատգամն է վառում. արորի ժանգը սրբել է պետք: Գալու է օրը, երբ հայկյան ցեղի աչքերը պիտի ժպտան ջրաղացի խաղաղությամբ. «*Վերադարձե՛ք, որդիներ*», զի՝

Սուրն ալ մեզմե կծնանի, սրբությունն ալ Ցորյանին... (Երկեր, 1979)

«Այս հատորը քերթողին գլուխգործոցն ըլլալ կթվի ինձի, հոն մարդկային այնպիսի բան մը կա, որ սահմանված է մարդ էակին հետ ապրելու: Երգն է անպատիր սերին, գոյակից վշտին, ընտանիքեն ծագում առնող և հայրենիքը ամրապնդող այն նվիրական պատվանդանին, որուն վրա միայն կրնա իրականանալ նույնիսկ մարդկության հեռավոր եղբայրությունը». այսպես արժևորեց Դանիել Վարուժանը «Հայրենի հրավեր» բանաստեղծական շարքը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«Հայրենի հրավերը» սքանչելի ու գեղեցիկ մի կոչ էր դեգերող հայությանը, հողի ու հայրենիքի ձայնն էր, այն՝ մերթ իջնող ու մերթ բարձրացող իր ելևէջներով, դա անցյալի կորստի ցավն էր, տագնապը ներկայի ու ապագայի լույսը... Այն ազգային ու համամարդկային բարձր հնչեղությամբ բացեց

մարդկության առաջ իր գաղափարական խոր բովանդակությունը և մեծ երգչի հոգու փխրուն հումանիզմը՝ շաղախված հայրենի հողի ակոսներում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Երկեր (1979)**, Սիամանթո, Վարուժան, կազմող՝ Ռշտունի Հ., Հայ դասականների գրադարան, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
2. **Շիրվանզադե (1961)**, Երկերի ժողովածու, հ. 8, Երևան, Հայպետհրատ:

REFERENCES

1. **Works (1979),** Siamant'o, Varowjhan /Siamanto, Varuzhan/, compiled by Rshtuni H., Library of Armenian Classics, Yerevan, "Soviet Writer" Publishing House.
2. **Shirvanzade (1961)**, Erkeri jhoghovac'ow /Collection of Works/, vol. 8, Yerevan, Haypethrat.

Сирвард Асрян

Сиаманто “Приглашение на родину” или “12 воззваний к армянству в эмиграции”

Заключение

Ключевые слова и выражения: *эмиграция, родина, земля, горе, боль, тоска, воззвание к единению, отчий зов, возвращение.*

Сборник “Приглашение на родину” или “12 воззваний к армянству в эмиграции” создан в период с 1909 по 1910гг. Здесь уже нет прежнего бунтующего духа, нет призыва к борьбе и тяжелых переживаний. Поэт выступает с воззванием к тем, кто оказался в эмиграции. Это зов родины, адресованный

армянству, это “плач армянских полей”, адресованный находящемуся на чужбине отцу, сыну, брату, это несбывшийся сон армянских дев, овеянный тревогой.

“Вернитесь в лоно наше, утра уже благоухают апрелем” – в этом стихотворении Сиаманто уже предчувствовал трагедию, нависшую над армянским народом. Вернувшись в 1909 году в Константинополь, Сиаманто напишет другой программный стих – “Роковое письмо другу”, который Даниел Варужан впоследствии назовет “талантливешийшим воспеванием горя”. Таким образом, после циклов стихотворений, призывающих к борьбе, Сиаманто выступает с произведениями оптимистического характера. В тот еще относительно мирный период Сиаманто попытался посредством своего поэтического воззвания вернуть армян домой. Поэт продолжал страдать под влиянием ужасных сцен трагедии, свидетелем которой он стал, однако массовая эмиграция грозила превратить родину армян в исключительно географическую единицу.

Sirvard Asryan

Siamanto: “Homeland’s Call” or “12 Appeals to the Exiled Armenians”

Conclusion

Key Words and Expressions: *exile, homeland, expatriate Armenians, sorrow, pain, longing, call for unity.*

“Homeland’s Call or ‘12 Appeals to the Armenians in Exile” was written between 1909 and 1910. Unlike Siamanto’s rebellious spirit expressed earlier, this work is not dominated by please to struggle or the burden of despair. Instead, the poet, in response to the demand of the time, creates a song of longing for Armenians wandering abroad. It is the call of the homeland directed toward Armenians, the “plea of the Armenian fields” addressed to the distant father, brother, or son. It is the bride’s tearful and unfulfilled dream, wrapped in anxieties for future days.

"Return to our embrace, O labourers,

The mornings will now smell of April..."

Siamanto had foreseen the tragedy awaiting his people. In 1909, after returning to Constantinople, he wrote *"Bloody News from My Friend"*, which Daniel Varouzhan described as a "masterful tragedy in verse." Following his heroic and militant poems, Siamanto wrote the optimistic series *"Homeland's Call" or "12 Appeals to the Armenians In Exile"*. During relatively peaceful years, he attempted to poetically persuade the exiled Armenians to return home and unite on their native soil. Though his heart continued to be tormented by the fiery tragic images, he called for the Armenian diaspora, scattered across the world, to unite around creative labour. He believed that emigration threatened to turn the homeland into nothing more than a geographic space.

Սիրվարդ Ասրյան - Բանասիրական գիտությունների թեկնածու, Վ. Պարտիզունու անվան հայ նոր և նորագույն գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դասախոս, ՀՊՄՀ «Մանկավարժական համալսարան» պաշտոնաթերթի խմբագիր, հեղինակ է 13 գիտական հոդվածի, հետաքրքրությունների շրջանակը՝ հայ նոր և նորագույն գրականություն: asryansilva@gmail.com

Сирвард Асрян - Кандидат филологических наук, преподаватель кафедры новой и новейшей армянской литературы имени В. Партизуни, главный редактор официального газета АГПУ, "ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ", автор 13 научных статей. В круг научных интересов входит проблематика, связанная с новой и новейшей армянской литературой. asryansilva@gmail.com

Sirvard Asryan - Candidate of Sciences in Philology, lecturer at the Chair of New and Modern Armenian Literature and its Teaching Methods after V. Partizuni at ASPU, editor of ASPU's official newspaper ("Pedagogical university"), author of 13 scientific articles and papers; focus of interests: new and modern Armenian literature

asryansilva@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 25.02.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 13.03.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 20.06.2025թ.